ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 16

30 հուլիսի 2014թ.

«ՈՍԿԵՏԱՓԻ ԲԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՈՍԿԵՏԱՓԻ ԲԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով.

Ավագանին որոշում է

1. «ՈՍԿԵՏԱՓԻ ԲԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես «ՈՍԿԵՏԱՓԻ ԲԱ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Ոսկետափի համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելվածի 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):
3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակության համապատասխան օգտագործելու պայմանով՝ Ոսկետափ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:
4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:
5. Հաստատել՝

   ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:

   բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

6. Առաջարկել համայնքի ղեկավարին սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը՝ Ընկերության միջոցների հաշվին:
7. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Ոսկետափ համայնքի ղեկավարին:

Աթանյան Գեղամ	կողմ
Ալավերդյան Էդիկ	կողմ
Բալասանյան Համլետ	կողմ
Բարսեղյան Գեղամ	կողմ
Խլղաթյան Հրայր	կողմ
Ղևոնդյան Ներսես	կողմ
Մանուկյան Վահրամ	կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 17

30 հուլիսի 2014թ.

ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը.

Ավագանին որոշում է

Ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն նշված չափով.

1. Սարդարյան Նարինե 100 000 դրամ
2. Սահակյան Գայանե 100 000 դրամ
3. Սուսունց Սիրուհի 85 000 դրամ

Ընդամենը՝ 285 000 /երկու հարյուր ութսունհինգ հազար/ դրամ:

Աթանյան Գեղամ կողմ
Ալավերդյան Էդիկ կողմ
Բալասանյան Համլետ կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Խլղաթյան Հրայր կողմ
Ղևոնդյան Ներսես կողմ
Մանուկյան Վահրամ կողմ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ